ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am,
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

13.07.2020
345-84

ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պողոսյան,

Հուլիսի 12-ին Սյունիքի մարզ մեր այցելությունը ցույց տվեց, որ Շաքիի ջրվեժի և մարզի մուտքն ազդարարող դարպասների հարակից տարածքները լի են աղբով, չկան տեղադրված աղբամաններ ու աղբը ոչ դրա համար սահմանված վայրում թափելու արգելքի մասին ծանուցող պաստառներ և/կամ գրություններ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Քա՞նի իրավաբանական և/կամ ֆիզիկական անձ է տուգանվել Սյունիքի մարզում վերջին հինգ տարվա ընթացքում աղբը չսահմանված տեղում թափելու համար:
2. Ինչո՞ւ չկան աղբամաններ մարզի տեսարժան վայրերում, մասնավորապես Շաքիի ջրվեժի հարակից տարածքում:
3. Ինչո՞ւ մարզի տեսարժան վայրերում չկան աղբը չսահմանված վայրում թափելու արգելքի և հնարավոր տուգանքների մասին ծանուցող պաստառներ և/կամ գրություններ:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ ենք արձագանքի և այս ուղղությամբ իրականացված քայլերի համար:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան